

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա գիտական խորհրդի նիստի

ք. Երևան

06 նոյեմբերի 2017թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա.Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա.Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի կողմից ներկայացված «Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքի արտաքին գրախոս նշանակելու հարցը:
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի կողմից ներկայացված «Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Լսեցին՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով տեղեկացրեց, որ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի

ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Միմոնյանը գիտական խորհուրդ է ներկայացրել «Ամինաթթուների ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունները, ստացման եղանակները» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը՝ արտաքին գրախոս նշանակելու համար: Աշխատանքը քննարկվել է ամբիոնում (նիստ №2, առ 12.09.2017թ.) և ստացել դրական արձագանք: Աշխատանքի վերաբերյալ կարծիք է ներկայացրել նույն ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանը (կարծիքը կցվում է), ով նշում է, որ աշխատանքն ունի կարևոր կիրառական նշանակություն, շարադրված է մատչելի և գրագետ հայերենով: Այն օգտակար կլինի ուսանողներին՝ հմտորեն կատարելու բնական միացությունների քիմիա առարկայի փորձնական աշխատանքները: Ս. Պետրոսյանը նշեց, որ աշխատանքում տեղ են գտել նաև որոշ բացթողումներ, որոնք հեղինակի հետ քննարկվելուց հետո շտկվել են:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանը, անդամներ Ա. Հովհաննիսյանը, Կ. Պետրոսյանը, ովքեր կարևորեցին ուսումնամեթոդական աշխատանքի անհրաժեշտությունը, առաջարկեցին շարունակել դրա տպագրության գործընթացը և ուղարկել արտաքին գրախոսման՝ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ:

Որոշեցին՝ (միաձայն) Հ. Միմոնյանի կողմից ներկայացված ուսումնամեթոդական աշխատանքը տալ արտաքին գրախոսման:

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:

Լսեցին՝ գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ ԵՊՀ ռեկտորատը հայտարարել է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի մասին: Ա. Սաղյանը նշեց, որ անհրաժեշտ է ներկայացնել մագիստրարուրայի և բակալավրիատի 2-4-րդ կուրսերում գերազանց սովորող ուսանողների թեկնածություններ: Մրցույթին մասնակցելու

համար հայտ են ներկայացրել ներկայացրել մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Էմմա Մակարի Ղազարյանը և բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Մարգարիտա Հայկի Բաղդասարյանն ու Աննա Լենդրուշի Ասատրյանը (մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են):

Ելույթ ունեցան՝ Գիտխորհրդի անդամներ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը և ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ովքեր նշեցին, որ նշված ուսանողները ուսումնառության ընթացքում ցուցաբերել են գերազանց առաջադիմություն, ակտիվորեն մասնակցում են ՈՒԳԸ աշխատանքներին և ուսանողական միջոցառումներին, ինստիտուտի հասարակական կյանքին և առաջարկեցին ներկայացնել նրանց թեկնածությունները: Ելույթ ունեցողներին համակարծիք էին նաև գիտխորհրդի մյուս անդամները:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց առաջադրել ուսանողուհիներ Էմմա Ղազարյանի, Մարգարիտա Բաղդասարյանի և Աննա Ասատրյանի թեկնածությունները՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա.Դադայան